

Սովորատ ԽԱՆՅԱՆ

ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն, ք.գ.թ.,

ԱրՊՀ պատվավոր պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ԺԱՄԱՆԱԿԻ ՊՈԵԶԻԱ՝ ԱՊԱԳԱՅԻ ԹԵՎԵՐՈՎ

Սույն գիտական հոդվածում վերլուծվում ու գնահատվում են ականավոր գրող Էդվարդ Միլիտոնյանի 2021 թվականին հրապարակած «Ժամանակի գիր» բանաստեղծական ժողովածուն:

Գիրքը դիտվում է որպես հանրագիտարանային ժողովածու, որի մեջ ներառված են 16 բանաստեղծական շարքեր, որոնցում գեղարվեստական բարձր մակարդակով ներկայացված է մերօրյա կյանքը՝ իր բազմաշերտ ու բազմերանգ ընթացքում:

Գիրքը որակվում է որպես նոր ներդրում արդի հայ պոեզիայի հարուստ գանձարանում:

Բանալի բառեր՝ Էդվարդ Միլիտոնյան, պոեզիա, ժամանակի գիր, Չարենց, ազգային ճակատագիր, հայ ժողովուրդ, միլիտոնյանական լեզու և ոճ:

С. ХАНЫАН

СОВРЕМЕННАЯ ПОЭЗИЯ КРЫЛЬЯМИ БУДУЩЕГО

В данной научной статье автор разбирает и оценивает сборник стихов «Письмена времени» (2021) знаменитого писателя Эдварда Милитоняна.

Книга определяется как энциклопедический сборник, в котором помещены 16 циклов стихов, в которых повседневная многослойная и разноцветная жизнь отражается в виде высокого художественного искусства.

Книга представляется как новое внедрение в сокровищницу современной армянской поэзии.

Ключевые слова: Эдвард Милитонян, поэзия, письма времени, Чаренц, национальная судьба, армянский народ, милитоняновский язык и стиль.

S. KHANYAN

POETRY OF TIME WITH WINGS OF THE FUTURE

This scientific article analyzes and evaluates the collection of poems "Chronicles of Time" (2021) by the writer Edward Militonyan.

The book is considered an encyclopedic collection, which contains sixteen cycles of poems, reflecting everyday, multi-layered and colorful life in high art.

The book is considered as a new treasure embedded in modern Armenian rich poetry.

Key words: Edward Militoniyon, poetry, characters of the time, Charents, national destiny, Armenian people, Militoniyon language and style.

Էդվարդ Միլիտոնյանը, որ բանաստեղծական անակնկալների բազմափորձ վարպետ է, իր հերթական 81-րդ գիրքը անվանել է **«Ժամանակի գիր»**։ Ժողովածուի այս անսովոր վերնագիրը մեզ մտովի տարավ դեպի Մեծն Չարենցի աստվածալեզու երգերի աշխարհը, որտեղ նրա մարգարեական խորհուրդներից մեկը հնչում է որպես հավերժական պատգամ՝ ուղղված գալիք երգասաններին.

*Թե ուզում ես երգը լսեն՝
Ժամանակիդ շունչը դարձիր,
Կապի՛ր ի նյարդով յուրաքանչյուր
Քո օրերին ու քո դարին,
Կյանքը սիրիր լիահնչուն
Ու մի դավիր քո քնարին՝*

Ստեղծագործական ներքին մղումով Միլիտոնյանը արձագանքել է անմահ Չարենցին՝ պոեզիան ժամանակի շունչ ընկալելու առումով՝ չմոռանալով, որ Գ. Նարեկացուց, Հ. Թումանյանից, Ավ. Իսահակյանից, Դ. Վարուժանից, Ե. Չարենցից, Պ. Սևակից հետո դժվար է լինել հայ բանաստեղծ։

«Ժամանակի գիր» ժողովածուն բացվում է «Առավոտ լուսո» բազմիմաստ աղոթքով.

*Իբրև «Հայր մեր» աղոթք
Ահա այս առավոտ
Ծավալվել է լույսը հաղթող
Անհավակնոտ:
Սոսնձում է իրար հակառակորդ եզրեր,
Որոճում է աշխարհն՝ ասես մի եզ,
Նան լույսն այս ցրեց, ինչ թվում էր հավերժ,
Նշխարի պես բաժնեց վերին, վարին ու քեզ՝*

Հասկանալի է, որ բանաստեղծական այս դիպուկ խոսքը 20-րդ դարի քաղաքական-հասարակական կացութաձևի էության ու նրա փլուզման մասին է։

Դարաշրջանի բնութագրական երևույթների և իրադարձությունների էությունը գրքում հստակորեն բացահայտվում է մարդու ներաշխարհի նկարագրությամբ։

¹ Ե. Չարենց, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 4, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1968, էջ 26:

² Էդ. Միլիտոնյան, Ժամանակի գիր, «Ծիծեռնակ» հրատ., Ե., 2021, էջ 6

Պատահական չէ, որ առանձին շարքն անվանված է «Մարդկանց ցուցահանդես», որը վկայում է բանաստեղծի աշխարհընկալման փիլիսոփայական խորքը, կյանքի տարաբնույթ հանգամանքներն ու իրադարձությունները, մարդկային հոգեկան տեղաշարժերը, կրքերի ու պատկերացումների ալեկոծումներն ու փոփոխությունները հմտորեն պատկերման կարողությունը:

Գրքի առաջին շարքի առաջին էջին Միլիտոնյան-նկարչի ստեղծած մարդկային երևակայության դիմանկարներն են՝ արևադեմ, ինքնավստահ, զարմացած, քողարկված, կենսածարավ, մանկաժպիտ հայացքներով, որոնց ավարտամասում՝ դագաղի մեջ հավերժական իր քունը գտած ադամորդին է:

Ուշագրավն այն է, որ նկարիչ-բանաստեղծն իր ստեղծած երևակայական կերպարների ներաշխարհը հմտորեն բացահայտել է պոետական խոսքարվեստով: Հիրավի, շարքերի մեջ հստակ երևում են դարաշրջանի մատուցած այն ակնկալվող անակնկալները, որոնց ընտելացան մարդիկ՝ դառնալով դարաշրջանի համոզիչ պատկեր:

Էդ. Միլիտոնյանը հոգեբան գրող է: Նա ճանաչում է մարդուն: Այդ են վկայում նրա թևավոր արտահայտությունները մարդկային բարդ ներաշխարհի վերաբերյալ: Լսենք նրան.

Մարդու ներսը անճանաչելի է հաճախ,

Ասես՝ ստորգետնյա ճարտարապետություն:

Բնչալիսի դամբարան ու գերեզման ունի,

Բնչալիսի հիվանդանոց է դիմում,

Բնչալիսի նկար է գնում անունը գաղտնի պահած,

Բնչալիսի խարդավանքներ է լարում,

Բնչալիսի խաղեր է խաղում,

Բնչալիսի Աստծու հավատում կամ պարզապես աղոթում

Այդպիսի մարդ է՝

Սակայն կարևորն այն է, որ Միլիտոնյանը մարդասոցություն չի քարոզում: Նա հետևում է թումանյանական մարդասիրական փիլիսոփայությանը:

Միլիտոնյան-գեղագետը չի մեղանչում ճշմարտության առաջ, քարոզներ չի հնչեցնում: Նրա բարոյախրատական չափատողերը ծիածանվում են որպես ժողովրդական թևավոր առած-ասացվածքներ: Բերենք օրինակներ. «Մարդ եթե չի տազնապում կյանքից, չի տազնապի և մահից», «Կյանքն ու մահը՝ մարդու առանցքի կողքերին երկու հավասար նժար», «Մարդը կյանք ու մահից գնդած մի Զատկի կղզու արձան», «Մարդ երբ ծիծաղում է, չի թաքցնում իր ատամները, որ չվախենան թշնամիներն ու բարեկամները»: Նման թևավոր մտքերը կարելի է ավելացնել շարքի մյուս բանաստեղծական տողերով: Ընդհանրության մեջ «Մարդկանց ցուցահանդես» շարքը մարդերգության գրական նոր տեսակ է արդի հայ պոեզիայում, որտեղ համարձակորեն ներկայացված է Մարդը և՛ իր

¹ Նույն տեղում, էջ 6

աստվածահաճո բարությանը, և՛ սատանայական չարությամբ: Այլապես չէին լինի մարդկանց ներաշխարհը ներկայացնող այսպիսի դիտարկումներ. «Մարդիկ երբեմն ուզում են խաբված լինել», «Մարդիկ երբեմն ասում են ճշմարտությունը», «Մարդիկ երբեմն խաղ են անում մահվան հետ», «Մարդիկ երբեմն ապրում են մեռած», «Մարդիկ երբեմն երագում են կործանել աշխարհը...», «Մարդիկ վրեժ են փորձում լուծել կյանքից ու մահից, Աստծուց ու սատանայից»¹:

Այսպես շարունակելով իր դիտարկումները՝ բանաստեղծը Սևակյան ավանդույթով ավամեջ է բերում 21-րդ դարի մարդուն, որը «...Երբեմն խնդում է Աստծո վրա, երբեմն հպարտանում է ցինիզմով... Երբեմն փառաբանում է մեղքը իր և ուրիշի, բայց ձաղկում է միայն ուրիշին»²:

Մեծանուն Չարենցը, որպես ժողովրդի հանճարի խորհրդանիշ, որպես նրա տառապանքի ցավակիր, վերջապես որպես ապագայի դեսպան, ներկայացված է ետջարենցյան ժամանակաշրջանի համարյա բոլոր գրողների երկերում: Կարող ենք ասել՝ առ այսօր ստեղծվել է Չարենցյան պատկերասրահ գրականության, գեղանկարչության, քանդակագործության, թատերարվեստի և այլ բնագավառներում:

Էդ. Միլիտոնյանը հպարտության ու երախտագիտության ամենանուրբ զգացումներով ձգտել է իր մասնակցությունն ունենալ այդ սրբազան գործում: Եվ՝ հաջողվել է նրան: «Ժամանակի գիր» ժողովածուի երկրորդ շարքը՝ «Չարենց» խորագրով միլիտոնյանական նոր ներդրում է մեր պոեզիայում և նկարչական արվեստում: Շարքը բացվում է «Չարենցի վերջին աշունը» խորագիրը կրող գեղանկարների փնջով, որի հեղինակը Միլիտոնյան-պոետն է: Էջի կենտրոնում Չարենցի դիմանկարն է՝ զանգրահեր գլուխը զարդարված աջից՝ դափնեպսակով, ձախից՝ փշե պսակով. հպարտության ու սրտակեղեք ցավի մի պատկեր, որի մտահղացումն ու արարումը ստեղծագործական լուրջ հաջողություն կարելի է համարել: Դիմանկարի ձախ կողմում բանտախցի պատկերն է, ներքևի մասում՝ Կարսի այն եկեղեցին, որտեղ կնքվել է ապագա բանաստեղծը: Դեպի եկեղեցու մուտքը սևաշոր կնոջ պատկերն է, իսկ գմբեթի խաչի մոտ՝ թևատարած աղավնին: Մի խոսքով, նկարների մի համահավաք, որտեղ բանաստեղծ-գեղանկարիչը պատկերել է պատմական դարաշրջանի դաժանությունը հանճարների հանդեպ և, ի հեճուկս ստալինյան բթացած գլուխների, ժողովրդի հավերժված սերը իր արժանապատիվ զավակների հանդեպ:

Շարքի «Չարենցի վերջին աշունը» ենթավերնագրի տակ Միլիտոնյանը բերում է բանաստեղծությունների մտահղացման հետևյալ աղբյուրը. «Մոցցանցային մեկնաբանությունների նմանակություններ՝ մեջբերած երեսնական թվականների մատնագրերից, բանաստեղծի մասին կարծիքներից և ասված-չասված խոսքերից»³:

¹ Նույն տեղում, էջ 11-12:

² Նույն տեղում, էջ 12:

³ Նույն տեղում, էջ 26:

Անցնելով Չարենցի կյանքի էջերի, նրա տաղանդի անեզր սահմանների, բնավորության երկրային ու երկնային բարեմասնությունների, ժամանակի շունչը դառնալու կարողության նկարագրությանը, Միլիտոնյանը հյուսել է մեծ գեղագետի բազմաշերտ ներաշխարհի պատկերը, նրանում հստակ ծիածանված են անմահ Չարենցի աշխարհընկալումը, կենսասիրության ինքնաբուխ դրսևորումները, ճակատագրի ողբերգական ու հերոսական էջերը՝ Միլիտոնյան-բանաստեղծի լեզվառճական առանձնահատկությունների վիպական մասշտաբայնության, խոհերի ու գեղումների քնարական տարերքի, պատմակենսագրական սկզբունքների պահպանման, երգիծանքի մտրակող ուժի շնորհիվ:

Գեղարվեստական պատկերների ինքնատիպ մի վառ համակարգ են շարքի երգերը և տողատակ մեկնաբանությունները: Բանաստեղծը համարձակորեն, տեղին բացում է փակագծերը, նշում մատնիչների և՛ կոնկրետ անունները, և՛ կեղծանունները: Այսպես, «Բորբ» բանաստեղծության վերջում Միլիտոնյանը ընդհանրացնում է Չարենցի անմահությունը հետևյալ պատկերով. «Բորբ, բորբ, հետմահու՝ բորբ: Ագնի, Արեգ, գառ, ար: Կրակի ծնունդ, կրակի գոհ: Փառք քեզ, բառ»:

Նման պոետական դիտարկումից հետո Միլիտոնյանը բերում է մեկնաբանությունը, որի տակ խորհրդանշական անվամբ Քյաբաբչի Մխոյի փսիտցը. «Համա թե բորբվեցիր, սուտ հեղափոխական»:

«Բորբ» բանաստեղծությանը հետևում է «Բանաստեղծն ու պաշտոնյաները» խոսուն պատկերը՝ տողատակ մեկնաբանությամբ, ուր ձախողված գրող Գևորգ Աբովի հարձակողական մոլուցքն է. «Չարենցը պետք է ցույց տա, որ ինքը գիտակցել է իր սխալները, ավելի ճիշտ, հանցանքները»: Եվ անմիջապես Սև Մկոյի զկոտոցը. «Ճիշտ է բռնելը, թող փտի բանտում»:

Դառնանք Գ. Աբովի մոլուցքին և շեշտենք, որ Չարենցի սխալներից մեկը եղել է «Երեքի» խմբում իր արևային անվան մոտ Գ. Աբովի անունը գրելը: Բացի այդ, սխալվել է՝ գրախոսելով Աբովի 1923թ. Մոսկվայում հրատարակված «Դանակը բկին» լրարիկ գրքույկը՝ ազնիվ մղումներով: «Լուրջ սպասելիքներ ունեինք Աբովից, նշել է նա:՝ Սպասելիքները չիրականացան գոնե առայժմ: Աբովը նման է Ռեմբոյին, խոստումներ ինչքան կուզեք, իրականացրած գործ-գրոշի»¹:

Ու եկել էր ժամանակը, որ պոեզիայում ձախողված Աբովը կույր վրիժառությամբ իր մատնությունը հնչեցներ՝ անմեղ հանճարին համարելով հանցագործ:

Դառնանք Միլիտոնյանի «Պետությունն ու բանաստեղծը» հյուսվածքին: Նրանում հնչում են հետևյալ դարապատկեր տողերը.

*Չարմանալի բան է կյանքը,
Պետությունը զենքեր ունի,
Վախենում է սակայն բառից,
Նույնիսկ նրա լռությունից
Ու փլվում է հենց այդ վախից: (էջ 30)*

¹ Տե՛ս **Չարենց**, «Երկերի ժողովածու» 6 հատորով, հ. 6, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1967, էջ 75-79:

Ու տողատակ բերում է մեկնաբանությունը՝ ՀՄՀ ՊԱԿ-ի հավատարիմներից մեկի՝ Հր. Քոչարի ցինիկ կոչով, «Չարենցը մի քար է՝ ընկած խորհրդային պոեզիայի ճանապարհին»:

Միլիտոնյանը որոշ բանաստեղծությունների մեկնաբանությունների տակ բերում է նաև հայ ազնվասիրտ մեծությունների կարծիքները Չարենցի մասին:

Այսպես, «Բանաստեղծն ու ընթերցողը» ստեղծագործության տակ ընդգծված է աշխարհահռչակ Վահրամ Փափազյանի թևավոր խոսքը. «Հին դարերում նման մարդկանց մարգարե էին անվանում»: «Մարյանի նկարը» երգի տակ ծիածանվում է աշխարհահռչակ Մ. Սարյանի գնահատականը. «Չարենցը լեգենդ էր»: Իսկ «Աստղը» երկի տակ հնչեցված է նույնպես անհատի պաշտամունքի գոհը դարձած տաղանդավոր արձակագիր, հայ ժողովրդի անմահ դուստրերից մեկի՝ Զապել Եսայանի սրտապարար խոսքը. «Թերևս մեզանից ոմանց անունները անցնեն գալիք սերունդներին միայն այն պատճառով, որ Չարենցի արժեքով մեկի հանդեպ եղել են արդար կամ անարդար»:

Զ. Եսայանի արդարամիտ գնահատականին հակաճառում է բանվոր Պողոսը՝ իր գրպարտիչ բարբաջանքով. «Դու էիր պակաս մեզ դաս տաս, արևմուտքի շպիռն, դու էլ կրոնես նրա ճամփեն»:

Ժողովածուի «Չարենց» շարքը ավարտվում է «Վերջին ճիգը» բանաստեղծությամբ, որը գրված է բոլոր այն հայերի անունից, ովքեր իրենց ամենաընտիր օրիներգն են դարձրել պոետի «Ես իմ անուշ Հայաստանի» պաննոն:

Զենք կասկածում, որ հայ քննադատությունը անդրադառնալու է էդ. Միլիտոնյանի սույն ժողովածուին: Իսկ մենք առանց վարանելու նշենք, որ աստվածաշնորհ բանաստեղծի սույն ծաղկեփունջը մի նոր հայտնություն է, բազմերանգ երգերի մի ինքնատիպ մատյան: Հիրավի, Միլիտոնյանի այս ժողովածուն առիթ է տալիս ասելու, որ պոեզիայի զարգացման գործընթացում տեղի է ունենում նկատելի ու շոշափելի մի երևույթ՝ առնչված հայոց լեզվի անսպառ հարստության, բառապատկերների բազմաշերտայնության, արտահայտչամիջոցների ճկունության և այլ հնարավորություններին:

Թերթում ենք գրքի երրորդ բաժինը՝ «Ակամա բացված շուրթերն աղջկա» վերտառությամբ, ըմբռնելով մարդկային աստվածանվեր սիրո էությունը շեշտող պատկերները ու համոզվում բանաստեղծի անմիջական, ճշմարիտ խորհուրդների մեջ, որոնք հնչում են ասես ընթերցողի սրտից. «Մերը վայրի թռչուն է», «Մերը հացի դանակի պես սուր կտրում է ժամանակ ու տարածություն», «Մերը դրախտից մեզ մնացած նշխար է», «Մերը լուսնի հակառակ կողմում էլ թե լինի, լույս կտա գիշերները», «Մերը հոգին թրծող կրակ է», «Մերը նման է օրվա բոլոր ժամերին» և այլն, և այլն: Մակայն այս քաղցր խոստովանությունների կողքին Միլիտոնյանը չի մոռանում, որ Մատանան ևս սեր է քարոզում, բայց նրա սերը ասելություն է, որ նաև՝

*Խառնածին սերերից ծնվում են
Պատերազմներ,*

Մեռնող-հառնողները ծնում են

Նոր պատերազմներ

Հանուն նախաստեղծ սիրո:

Բնչո՞ւ են իրար այսքան նման

Մերն ու պատերազմը: (էջ 64)

Բանաստեղծ-նկարիչ Էդ. Միլիտոնյանը գրքի հերթական շարքի մուտքը զարդարել է դրոշմ պարզած նավ, փորագրել «Ծովեր» բառը, իսկ ներքևում ծովի մեջ լողացող ձկներ, ջրահարս, որի հայացքում, աչքերի խորքում ու շուրթերին՝ ծովածուփ կյանք: Հրաշալի նկարչական արվեստ՝ հոգեբան նկարչի վրձնի արձագանքով: Ապա բացվում է երկերի շարքը՝ «Ծովեր» խորագրով: Եռաստող, քառաստող ու հնգաստող երգերի շարքում ծփում են ծովը ու ծովածուփ իմաստասիրությունները թնավոր տողերով: Փիլիսոփայական պոեզիան՝ քառաստող կառուցվածքով, որ կամարվել է պարսկական պոեզիայում՝ Օմար Խայամի շնորհիվ, ապա արձագանք գտել հայկական քնարերգության մեջ Հ. Թումանյանի ոսկե գրչով, հետագայում լայնորեն ընդունվել է հայ գրական գործընթացի տարբեր փուլերում: Էդ. Միլիտոնյանի «Ծովեր» շարքը ավանդույթի սովորական շարունակություն չէ, այլ միանգամայն նոր ծփանք փիլիսոփայական քնարերգության խաչմերուկներում:

«Ժամանակի գիր» ժողովածուն ժողովրդի կյանքի ամենաբնութագրական հիմնախնդիրների գեղարվեստական պատկերն է: Ու բնական է գրքի «Դատավարություն» շարքը՝ Միլիտոնյան-նկարչի գծանկարների մուտքով:

Կարող են կարծիքներ հնչել, թե ինչ կապ ունի դատավարությունը պոեզիայի հետ: Սակայն առանց հակաճառելու խորհուրդ կտայինք ուշադիր կարդալ շարքը՝ համոզվելու, որ կյանքում չկա մի բնագավառ, որը պոեզիայի նյութ չդառնա: Եվ այնքանով, որքանով մարդկային հասարակությունը դեռևս աղտոտված է, դեռևս մարդը՝ Նարեկացու երազած բյուրեղությանը չի հասել, դատավարությունը անհրաժեշտ է լինելու՝ մարդու խիղճը տեղը բերելու համար:

Հենց այս մղումով էլ ստեղծվել է շարքը, որի հանդեպ լրջախոհ ընթերցողը անտարբեր լինել չի կարող: Բերենք շարքի առաջին պատկերը.

Մարդասպանի մեղքը կշռեցին,

Չկշռվեց, ծանր էր անչափ:

Դատավորը թնաթափ գնաց

Խորհրդակցական սենյակ

Ու դուրս եկավ

Փոքր Մհերի պես: (էջ 80)

Սովորական պոետական խոսքաշար չէ շարքը: Դա խղճի, արդարամտության, ազնվության, ժողովրդի հանդեպ պատասխանատվության, արժանապատվության և այլ բարեմասնությունների բանաստեղծական օրենսդրություն է, որի կարիքն այսօր ևս զգացվում է, ինչպես հազարամյակներ շարունակ: Այստեղ խոսք է գնում խղճի, մեղքի, ժողովրդի ուժի, օրենքի գերակայության, դժգոհության և այլ

երևույթների մասին: Սակայն քանի որ նյութը գեղարվեստի աշխարհ բերելու հանգամանքն է, ուստի նշենք, որ բանաստեղծին հաջողվել է պատմության դասերը դարձնել կենսափիլիսոփայություն, ժամանակը ներկայացնել պոետական անուրջների գաղափարափուլական պատկերով՝ մեր իմաստուն նախնիների հանգույն ընդգծելով ժողովրդի ուժն ու անմահությունը.

Ժողովրդին դատելու համար

Դատավորը չգտավ ոչ մի բառ:

Նա լուռ արտասանեց դատավճիռը,

Եվ բոլորը հասկացան՝

Ժողովուրդն անմահ է... (էջ 81)

Ընդհանրության մեջ էդ. Միլիտոնյանի պոեզիայի առանցքը Մարդն է՝ օրերի հոգսերով ծանրաբեռնված, բնավորության առինքնող ու վանող դրսևորումներով: Միլիտոնյանական պոեզիայում անձնավորված են բնությունը, բնության առարկաները, տիեզերական մարմինները: Դրա փայլուն վկայություններից է «Մոմի կյանք» շարքը, որի մուտքը իսկ և իսկ Մարդու և Մոմի պայմանական գուգապատկերն է: Իրոք որ Մարդը Մոմ է, Մոմը՝ Մարդ: Պատմական այս գուգափետ-համաձույլ պատկերով բանաստեղծն ընդգծում է Մարդու ճակատագիրը: Չմոռանանք, որ Մոմի խորհրդանշանը Մարդու սրտանվեր ժողովրդասիրության դրսևորման օրինակ է: Միլիտոնյանի ասացվածքները Մարդու և Մոմի միանման այրումի մասին ուղղակի գտնված են: «Մարդու հոգին՝ մոմի թել, Իր հետ այրում է մարմինը լուռ», - ասում է բանաստեղծը և ապա արարում իմաստասիրական իր բյուրեղյա ուլունքաշարը. «Մարդկային Աղոթքների մեջ Մոմն անշնչանում է: Դա էլ նրա աղոթքն է առ Մարդ և Աստված»: «Երբ Արարիչն ասաց՝ Եղիցի լույս, Նա, իհարկե, նկատի ուներ Նաև մոմի լույսը»: «Մարդը ինչ սարքում է՝ իր նման է, Ահավասիկ՝ մոմը», «Մոմը կանգնած է մահանում», «Մոմից կարող ենք սովորել հանդարտ լույս տալու դեր»: Նման օրինակները շարունակել՝ նշանակում է ամբողջության մեջ բերել շարքը: Ուստի այստեղ մեր խոսքը համեմենք մի եռատողով, որը վերաբերում է մարդկային հասարակության բոլոր ներկայացուցիչների հավասար իրավունքին ու ծառայությանը.

Էժան ու թանկ մոմերն

Իրար նայում են

Նույն կրակի սիրով... (էջ 92)

Բայց շեշտենք նաև բանաստեղծի արդարամիտ ու ճշմարիտ դիտողությունը այնպիսի մարդկանց վերաբերյալ, ովքեր օգտակար ոչինչ չեն նախաձեռնում հասարակության համար, բայց հանդես են գալիս գնահատողի դերում.

Ոմանք ցանկանում են, որ ուրիշներն

Այրվեն մոմի պես, լույս տան,

Իսկ իրենք գնահատեն այդ լույսի

Սովերը: (էջ 93)

Էդ. Միլիտոնյանի պոեզիայի քնարական հերոսը վառվող մոմի ջերմությամբ վերցնում է գետնին ընկած հացը, հպում ճակատին ու դնում բարձր մի տեղ: Ասել է թե՛ Մարդ մարդեղանում է ինքնայրումի հրով հաց վաստակելու ճանապարհին: Բանաստեղծը պատկերում է հոգեբանական մի վիճակ, որը մարդուն տանում է դեպի հայաբնույթ արարման դաշտ, այդտեղից՝ դեպի հավերժության աստղաժայիտ ուղի: Դա է քաղաքացու հոգևոր շարժման սկիզբն ու լուսավոր բարձունք տանող ճամփան: Ազգային ճակատագրի բանաստեղծականացման ճշմարիտ հայտնությունն է «Հայն ու հացը» երգը: Որտեղ էլ լինի «Այս հին ազգության մարդը մշտապես նեղվում է քիչ հացից»: Այս գյուտը հոգեբանական լույսի շողերով գտնված փիլիսոփայությունն է, որի փակագծերը բացելուց դեմո հառնում է աստվածապատկեր մի անհատ, որի «Հացի փշրանքները Աստղեր են սեղանին պսպղացող»: Այս պատկերը Աստվածաշնչյան «Ոչ միայն հացիվ» խորհրդի և՛ ընկալումն է ազդարարում, և՛ դրա իրականացման հմայքը հայ մարդու խղճով ու ճիգով: Այս հայաբնույթ զգացողությունը բանաստեղծին տանում է դեպի 2020-ի համավարակի օրերը, ուր «Բոլորն իրար հետ խոսելու մի լեզու ունեն», և «Դա խոսք չէ, Լռակյաց տոչոր սեր է» և որտեղ «Պիղատոսը գործը արած համարեց», «Հանկարծ ճաշի գոլորշու հետ Ջերմություն զգաց»: Նա մտածեց, որ կանցնի այդ ջերմությունը, սակայն «Չանցավ, Տեստավորեցին, դրական արդյունք, Կորոնավիրուս-19»:

Բանաստեղծը եթե իր ժողովածուն անվանել է «Ժամանակի գիր», բնական պետք է համարել դարաշրջանի բոլոր կարևոր երևույթների ու իրավիճակների ներառումը որպես պոեզիայի նյութ: Ու «Մարդիկ և կորոնավիրուսը» բանաստեղծությունից «Անվախ դիրք» շարքին անցնելը իրականում պետք է գնահատել որպես բանաստեղծի Գևորգեմիայան գնահատում:

Ես գիտեմ, իմ գործը մարտական,

Պոետը - գալիքի դեսպանն է,

Թղթակիցը նրա սեփական

Եվ նրա խղճմտանքն ու ձայնը...¹

Իր գործի իմացությամբ, իբրև գալիքի դեսպան, Էդ. Միլիտոնյանը համարձակորեն դիրքավորվեց, հետ նայեց, տեսավ 20-րդ դարի 1-ին, 2-րդ համաշխարհային պատերազմները, Հիրոսիման ու Արարչի շուրթերով արտաբերեց. «Ոչ մի վայրենի չպիտի մարդ դառնա, Որ հեշտորեն հետո չվայրենանա»: Տեսավ ու եզրակացրեց. «Մույն տրագիկոմեդիան լավեց քար ու բառի արանքում»:

Ըմբռնելով Էդ. Միլիտոնյանի բանաստեղծական շարքերը՝ դրանց մասին գրականագիտական տեսական-հերթապահ-հնչեցված տեքստներին ու ընդհանրացումներին դիմելն ավելորդ է: Պարզապես հոգու աչքերով պետք է տեսնել երգերի ենթաբնագրային խորքերն ու սրտի շուրթերով կարդալ այն խորիմաստ մտորումները, որ մտքի մետաքսաթելերով հյուսում է նա: Եվ որ ամենից

¹ Գ. Էմին, «Նոր ճանապարհ» Հայպետհրատ, 1953, էջ 4:

զլխավորն է, մի կողմ թողնել բանաստեղծական հին ու նոր ձևերի քննարկումը և համոզվել, որ իսկական պոեզիան արարման հաստատված սահմաններ չի ընդունում, ճանաչում է բանաստեղծի՝ դարաշրջանի ձայնը դառնալու կարողությունը, նրա էությունը ծանրութեթև անելու ուժը, դիրքավորվելու վճռականությունն ու մարտնչելու կամքը, առանձնապես հայրենիքը պաշտպանող զինվորի համար.

*Դիրքը Անվախն է պաշտպանը՝ անվախ,
Գիշեր է, կրկին հարձակում աջ-ձախ,
Հայ զինվոր, սպա ձուլված միակամ,
Մինչև առավոտ թշնամիք ընկան:*

*Սա շախմատային խաղ է ու պայքար,
Քնած ես, Նիկե՝ օրենքի աշխարհ,
Ձեռքիդ կշեռքն էլ եղծ ու անարդար,
Նույն նախնադարն ես՝ 21-րդ դար¹:*

Դիրքավորման այս վճռական կոչից հետո Միլիտոնյանի քնարական հերոսը նրբասիրտ զգացմունքների աշխարհից քայլում է դեպի դիրքեր, որովհետև ունկերին է հասնում դարաշրջանի «Երկոտանու ոռնոցը»: Եվ բանաստեղծը մարդասիրական-աշխարհափրկիչ տազնապով դիմում է աշխարհին.

*Բոլորդ գիտեք՝ մայրցամաքներում
Կան պատերազմի ինկուբատորներ,
Բազում բարձրագույն կաբինետներում
Ծնվում են բճեր խարդավանքների,
Որոնք կջնջեն ամեն բան իրենց
Ճամփից խանգարիչ²:*

Հայաստանի և նրա հինգհազարամյա դուռն ու դարպասը հանդիսացող Արցախի նորօրյա ճակատագիրը ներթափանցվում է քնարական հերոսի հոգու խորքը, դառնում զինվորագրվելու կոչ, դիմում՝ հարևանների տարածքներն ու կերտած քաղաքները, ավաններն ու գյուղերն իրենցը համարող կեղծ ու ամբարիշտ բռնապետներին, ինչպիսին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևն է «Որը քիչ է մնում երգվի Ալլահի անունով, Որ չեն ումբակոծել Շուշիի եկեղեցին, դա երևի շատ խորամանկ հայերն են արել»: ... Թե հայերը «Ինչո՞ւ են անվերջ հիշում Սումգայիթը, Բաքուն: Իսկ Էրդողանին հիշեցնում ցեղասպանությունը»:

Քաղաքական իրադարձությունների բանաստեղծական այս ճշմարտացի պատկերներն ենք կարդում «Խոցված մատյան», «Աշխարհի դեկավարներին», «Ուղերձ աշխարհի հզորներին» և այլ գործերում: Բանաստեղծը, որպես պատգամախոս, դիմում է Գերմանիային, Անգլիային, Իսրայելին, Գյոթեի,

¹ Էդ. Միլիտոնյան, «Ճամանակի գիր», «Ծիծեռնակ» հրատ., Ե., 2021, էջ 111:

² «Նորօրյա ոռնոց», էջ 112:

Շեքսպիրի, Բայրոնի, Մանդելշտամի երկրների ղեկավարներին՝ չփակել աչքերը Արցախում տեղի ունեցող նոր Ցեղասպանության հանդեպ: Ինչո՞ւ են լռում Ամերիկան, Ռուսաստանը: Եթե կենդանի լինե՞ր Դոստոևսկին, նորից կգրեր «Ոճիր և պատիժ» վեպը: Բանաստեղծը վերջապես խոսքն ուղղում է աշխարհին.

Երկրագունդ, դու մոլորված պտտվում ես գլուխդ բռնած,

Չես հասկանում ուրե՞ր եմ մարդիկ,

Ուրե՞ր՝ գազաններ,

Նախնադա՞ր է, թե՞ 21-րդ դար: (Էջ 121)

Էդվարդ Միլիտոնյանն իր երախտագետ ու հպարտ ժողովրդի անունից դիմում է հայրենիքի փրկության, ազգային արժանապատվության համար նահատակված հերոսներին, փառաբանում նրանց՝ որպես անմահ ազատամարտիկներ՝ ընդհանրացնելով ժամանակի հարաթև խոսքը.

Ու նորից հերոս, նորից պայծառ զոհ,

Արյուն, որ երբեք չի լերդանալու,

Գնում է ընդոստ, որպես կուռք մի խոյ,

Իր եղջյուրներով սեպագրելու՝

Կարծր քարափին հավիտենության

Մեր օրենքն հողե, մեր դրոշմը լեռ:

Եվ դաշտն այս, իբրև հին ու նոր մատյան,

Ձեզ կարտացոլի Արարիչ ու Նեռ: (Էջ 129)

Կարդալով Էդ. Միլիտոնյանի «Ժամանակի գիր» ժողովածուի բանաստեղծական շարքերը՝ համոզվում ես, որ բանաստեղծն ու ժամանակն ապրում են իրար մեջ: Ահա թե ինչու նրա երգերում կյանքը շողարձակում է իր բոլոր շերտերով: Դրա լավագույն վկայությունը ոչ միայն սույն ժողովածուն է, այլև «Մի բուռ խոսք», «Բարձերով կռիվ», «Քարկապ», «Քթաշխարհի հերոս Արարը» և մյուս գրքերը:

Այդ ժողովածուներում գետեղված հայրենասիրական երգերի նոր շափաղումը խտացված երևում է «Ժամանակի գիր» ժողովածուում: Միայն «Քարեր» շարքը կարող է հաստատել մեր այս կարծիքը:

Ընդհանրապես, Միլիտոնյանի պոեզիան հայ մարդու, հայոց բնության փոխկապակցված գեղարվեստական պատկերն է ոչ միայն փրկված փոքրիկ Հայաստանի, այլև աշխարհասփյուռ հայության մտապատկերում ծփացող կարոտը նաև կորուսյալ Հայրենիքի հանդեպ: Ընթերցում ես «Այս տունը քո տունն է» շարքը, մտովի տեղափոխվում ես Արևմտյան Հայաստան: Շարքը գրելու շարժառիթը նշված է հեղինակի «Երկհարկանի տունը» բացման խոսքում: «Վերջերս,- գրում է նա,- կարդացի ամերիկահայ հասարակական գործիչ Զավեն Խանջյանի «Այս տունը քո նո՞ր է, թե իմ» գիրքը, որը պատմում է Արևմտահայաստան կատարած ուխտագնացության մասին: Ինձ շատ հուզեց պապական տան վերաբերյալ հատվածը, և դա ինձ ներշնչեց գրելու այս արձակաբանաստեղծական տարբերակը, որոշ անուններ փոխված են, պատմությունը դիտված է իմ աչքերով:

Մերոնք էլ Տարոնի դաշտավայրում թողել են տներ: Սա բոլորի պատմությունն է: Թափառող պուժե է դարձել»:

Տեղին ու ճիշտ դիտարկում: Կորուսյալ Հայրենիքի ցավը ժողովրդական բանահյուսության մեջ ստեղծված տարբեր ժանրերի պուժեներ դարձած թափառում են ոչ միայն Հայոց երկրում, այլև աշխարհի բոլոր ծայրերում, ուր հանգրվանել են հայ մարդիկ: Նման պատումների ծփանքն ենք տեսնում «Աղըն շեն», «Հալեպ», «1994», «2006» պատումներում: Նրանցում փոփոխվող աշխարհում ազգերի փոխհարաբերությունների հարցն է շոշափված: Հայուհի Լորան ամուսնու և որդու հետ գնում է Աղըն գյուղ, գտնում հայրենի երկհարկանի տունը, որ կառուցել է Պապ Տիգրանը: Տունը նայում է Այնթափին: Տան ծեր թրքուհի մայրը կանչել է ընտանիքին, որ հյուրերի հետ նստեն սեղանի շուրջ: Թրքուհի մայրը հայտնում է, որ տունը գնել է ամուսնու հայրը «Պետությունից, 1934 թվին»: Զրույցը շարունակվում է բակում հայ մարդու տնկած ընկուզենու շուրջը: Առանձնապես անկաշկանդ է Զավենի և Հուսեինի զրույցը: Բակում զրոսնելիս Հուսեինը հարցնում է. «Հիմա այս տունը ի՞նչ է, թե՞ քուկը»: Որպես հայ ընտանիքի ուղեկից՝ թարգմանիչը Սրբազանն է՝ թախծոտ ապրումներով հոգին ծանրաբեռնված: Պատումն ավարտվում է «2019» գրությամբ, որտեղ հեղինակը հիշեցնում է. «Հիմա 2019 թվականն է, հե՛յ Հուսեին, ընկուզենին մնացել է, յոթ տարի հետո նա պիտի պտուղ տար, ինձ լուր տուր, ո՞նց է քո առողջությունը: Այսինքն ինձ չէ, Զավենին լուր տուր, նա արդեն 75 տարեկան է» (էջ 149):

Ամսահ Համո Սահյանը ժամանակի զգացողությունը համարել է բանաստեղծի ստեղծագործելու նախապայմանը: Այս առումով իրենց դերն են կատարում նաև հուշերը: Միլիտոնյանի այս պատումը աչքի է ընկնում հայ մարդու արարող ոգու և աշխարհը արարումով զարդարելու երազանքի անմիջական նկարագրությամբ:

Էդ. Միլիտոնյանի «Ժամանակի գիր» ժողովածուն հաճելի անակնկալների բազմերանգ ծաղիկների փունջ է: Գրքի յուրաքանչյուր շարք բացում է կյանքը ներկայացնող մի նոր դուռ և ընթերցողին հրավիրում դասի: Բայց սովորական դաս չէ այդ, կենսափիլիսոփայական հարցերի մի նոր քննարկում, որն ունկնդրում ես, հիանում, զարմանում, հաստատում, դիտում ու գալիս հաճելի մի եզրակացության. «Այս գիրքը հանրագիտարանային կառուցվածք և արժեք ունի: Հեղինակը կյանքի բոլոր էջերը ըմբռնանալով, նաև Աստծո կողմից իմաստության հնոցում կոփված գրագետ է՝ սերված հայոց մեծերի զարմից»:

Անդրադառնալով «Գիր և ճակատագիր» շարքին, կարդանք, նորից նոր թերթենք, և կհամոզվենք, որ Միլիտոնյանը ոչ թե մատը ճակատին՝ բառեր է որոնում, այլ հենց նոր է դուրս եկել Հայոց բառերի ծովից՝ Սանասարի հանգույն Քոռեկիկ Զալալին հեծած, թևածում է՝ բառ-պատկերների Ծիրանին ուսերին: Ապացույցը, որ մատնացույցի արժանի է, գրի և ճակատագրի զուգորդումն է: Բանաստեղծը մերթ թուր-Կեծակին ձեռքին հարվածում է բանաստեղծ-ալքիմիկներին ու մերթ խոնարհումով վերհիշում Մեծն Պարույր Սևակին ու շշնջում. «Նրա գրվածքն

ավարտ չունեն։ Վերնագիրը մնաց օդում կախված՝ Աստղերի և այլ երկնային մարմինների պես¹։

Չէ, պիտի ասենք, չասենք, կնամանվենք նախանձ ընկերոջ։ Գրենք, որ Էդ. Միլիտոնյանը և՛ կյանքում է Մեծսիրտ-Մեծահոգի Մարդ, և՛ պոեզիայում։ Ապացույց եք ուզում, վերցրեք բացեք այս գրքի 153-րդ էջը ու կարդացեք «Ջրույց մահացած ընկերներիս հետ» կարոտակեզ երգը, կհատավաք մեր խոսքին։

Կարդացինք այդ երգը..., ու թվաց, թե Էդվարդը մեր ու իր մտերիմ ընկերների անունից է գրել այդ արցունքախառն երգը.

*Ես ո՛ւմ զանգեմ հիմա,
Մեկդ գնաց մահով խիստ բնական,
Մեկդ եղավ հանկարծ ինքնասպան,
Մեկդ ուղի ընկավ ծրագրված, դաժան
Սպանությամբ։
Ոմանք դանդաղ՝ ծանր հիվանդության
Խարխուլ նավակ նստած։ (էջ 153)*

Բա ո՞նց չհուզվեւ, երբ ասես քո անունից է նշում ընկերների հեռախոսների համարների մոռացումը և խնդրում է ուրիշ համար «էն տեղերից» կամ էլ՝ «մի լուր... անձայն, անբառ, ոնց կրակոց Խլացուցիչով ատրճանակից Ուղիղ սրտին ուղղված»։

Արցունքով գրված այս պաղատանքից հետո, ասես ի լուր բարի մարդկանց, եղբոր ձայնով ճշում է.

*Օ, ձեզ համար սիրտս ամենամոտ թիրախն է պարզ
Աչքի պես բաց
Բայց ձեզ ասեմ անհույզ, առանց ասմունքելու՝
Խոցված է նա արդեն,
Սրտի նման էլ չէ
Գիրք է հիշատակաց։ (էջ 153)*

Այս սրտաբուխ խոսքից հետո մեր արդեն յոթ տասնյակ տարիների քաղցր ու դառը խմիչքները համտես արած բանաստեղծը մեկեն մեր օրերի աղավաղված բնավորություններն է հիշում ու կոչում ոմանց՝ «Չկտցեն սեղանի փշրանքը սիրո», բացառեն մատնությունը, ուրացումը, այլ միաբանվեն՝ ստեղծելու... Մի համընդհանուր սրբազան էպոս՝ «Հասկանալի միայն ամենքին»։

Բանաստեղծ Էդվարդ Միլիտոնյանի ունկերում հնչում է Նարեկացու և Շնորհալու բարության աղոթքը, Թումանյանի և Բսահակյանի ընկերասիրության խորհուրդը, Չարենցի և Բակունցի ցավի ճիչը, Սևակի և Սահյանի ազնվության շշուռը, այլապես չէր ծնվի նրա «Բառերը» երկիմաստ խոստովանությունը.

*Երբեմն չեմ հավատում բառերին,
Որ ասում են մարդիկ
Մարդկանց։*

¹ «Վերնագիր փնտրելիս», էջ 152։

Միշտ հավատում եմ բառերին,

Որ ասում եմ մարդիկ

Ծառերին, լեռներին:

Չեմ հավատում, հավատում եմ:

Բառերն ազատ են բնության մեջ

Եվ բանտարկված՝ մարդկանց ականջներում: (Էջ 159)

Իր հետ կազմակերպված հարցազրույցներից մեկում Համո Սահյանը ասել է. «Պոեզիայի դերը մնում է մարդուն ազնվացնելը, գեղեցկացնելը»¹:

Կարդալով Էդ. Միլիտոնյանի «Գիր և ճակատագիր» ծավալուն շարքը «Ժամանակի գիր» գրքում՝ կարող ես հաստատել, որ Սահյանի ժառանգորդ Միլիտոնյանը արարում է մարդուն ազնվացնող պոեզիա: Մարդկանց հոգու գեղեցկության, նրանց ազնվության պոետական նախշեր են «2020 թվին Սասնո Գոմք գյուղի մարդիկ», «Պոեզիան», «Բանաստեղծի սիրտը», «Դռներ ու բառեր», «Գրիչը», «Հանդիպումներ», «Հանգավորում», «Գրվածքը», «Լեզուն», մի խոսքով, շարքի բոլոր երգերը: 21-րդ դարի հայ պոեզիայի լավագույն օրինակներից է այս շարքը, որն արարվել է սրտի թելադրանքով, հոգու ջերմությամբ, մտքի թռիչքով՝ ապացուցելով, որ իսկական պոեզիան գեղագիտական հավատամքի և իդեալի, աշխարհի ներդաշնակության, մարդու ազնվացման փիլիսոփայություն է: Հենց այս գաղափարահուզական շերտերի շնորհիվ են ամբողջանում Միլիտոնյանի բանաստեղծական նկարագիրը և հասուն-կենսահաստատ գոյափիլիսոփայությունը:

Ժամանակի և նյութի խորքային ընկալման, ստեղծագործական կարողության, կյանքի հնոցում ոգու թրծման արգասիք են Միլիտոնյանի այս ժողովածուի նաև «Տիգրան Մանսուրյան», «Զարկերակ» շարքերը: Չմոռանանք ընդգծել նաև գրքի «Սև հումոր» շարքը՝ Միլիտոնյանի կենսածին ու սուր հումորի ծիածանը:

Հավատում ենք, որ Էդ. Միլիտոնյանի «Ժամանակի գիր» բարձրարվեստ ժողովածուն գնահատվելու է որպես թարմ ներդրում արդի հայ պոեզիայի հարուստ գանձարանում:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.թ. Հ.Ս.Ղազարյանը:

¹ «Գրական թերթ», 1968, 26 հուլիսի: